ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀ ԿԳՄՍՆ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օգնական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վայքի ավագ դպրոց,

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կիմա Օհանեսյան

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Գեղանի Աթանյան

ԱՌԱՐԿԱ՝ Երաժշտություն

ԴՊՐՈՑ՝ Վայքի հիմնական

Վայք 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....3
ԳԼՈՒԽ 1. ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ……6
ԳԼՈՒԽ 2.ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ……9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……..……17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Հայաստանի հանրապետությունում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական վերաձևումներն ու զարգացումները իրենց խորը կնիքն են դրել դպրոցի և ընտանիքի փոխհարաբերությունների վրա: Մի շարք դրական տեղաշարժերի հետ զուգահեռ հասարակության մեջ խորանում է սոցիալական շերտավորումը, փոփոխվում են մարդկանց կենսակերպը և որպես դրա հետևանք նկատելի է հոգևոր-բարոյական արժեքների կորուստ:

Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջնային սոցիալ-մշակութային միջավայրն է, այն կարևորագույն սոցիալական ինստիտուտը, որն իրականացնում է մի շարք գործառույթներ՝ սերնդի վերարտադրման, դաստիարակության, զարգացման ու սոցիալականացման: Իհարկե՛, արդի ժամանակաշրջանում ընտանեկան դաստիարակության համակարգը որոշակի փոփոխություններ է կրել. փոխվել է ավանդական հայ ընտանիքի նկարագիրը՝ այսօր արդիական դարձնելով ընտանեկան դաստիարակության, դպրոցի և ընտանիքի համագործակցության հիմնախնդիրը:

Այս տեսանկյունից հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրը պետք է լինի ոչ միայն սովորողների կողմից պետական չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացումը, կարողությունների և հմտությունների զարգացումը, այլև արժեքային կողմնորոշումների, քաղաքացիական որակների ու դիրքորոշումների, ազգային ինքնագիտակցության ձևավորումը, հասարակությանը նպաստ բերող ու ստեղծագործող անհատների դաստիարակումն ու սոցիալականացումը: Այդ խնդիրը արդյունավետորեն կլուծվի միայն դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցության պայմաններում:

Կրթության օրենսդրական հիմքերում՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքում (հոդված 1) սահմանված է, որ. «Ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը Հայաստանի հանրապետության հովանավորության և

պաշտպանության ներքո են: Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների առաջնային պաշտպանությունը»[15], Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում, Հանրակրթության մասին ՀՀ օրենքում ամրագրված են երեխաների իրավունքների պաշտպանության, երեխաների նկատմամբ ծնողների, ուսուցիչների պարտականությունները [5, 13]:

Երկրի սոցիալ-տնտեսական մակարդակը, համացանցով երեխաների աննախադեպ տարվածությունը, կրթության որակի ապահովման, ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման մեջ ծնողների ակտիվ ներգարավման խնդիրը պահանջում է առավել հայեցակարգային մոտեցում, միջոցների և տեխնոլոգիաների որոնում:

Հետազոտության նպատակը սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում դպրոցի և ընտանիքի համագործակցության նոր ձևերի և միջոցների առաջարկումն է:

Հետազոտության օբյեկտը սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման գործընթացն է:

Հետազոտության առարկան սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման ձևերն ու միջոցներն են:

Հետազոտության հիմնախնդիրն՝ օբյեկտին, առարկային համապատասխան սահմանվել են հետևյալ խնդիրները.

1. Բացահայտել և վերլուծել դպրոցի և ընտանիքի համագործակցության վերաբերյալ գիտական գրականությունում առկա տեսական-հայեցակարգային մոտեցումները:
2. Հետազոտությամբ ուսումնասիրել ուսուցիչների, սովորողների ու նարանց ծնողների համագործակցության արդի վիճակը և նրա առանձնահատկությունները, սկզբունքները և դրա հիման վրա առաջարկել դպրոցի և ընտանիքի համագործակցության արդյունավետ ժամանակակից ձևեր և միջոցներ:

3. Մշակել մանկավարժական գիտելիքների հարստացման նպատակով կազմված ծնողական ժողովների, սեմինարների թեմատիկան:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դպրոցի և ընտանիքի համագործակցության մեր կողմից առաջարկվող ձևերն ու միջոցները, ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացման նպատակով կազմված ծնողական ժողովների, սեմինարների թեմատիկան կարող են հաջողությամբ օգտագործվել հանրակրթական դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման գործընթացում:

ԳԼՈՒԽ 1. ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Ընտանիքը եղել ու մնում է հասարակության կազմավորման հիմքը: Ընտանիքը երեխայի առաջնային սոցիալ-մշակութային միջավայրն է. այն էականորեն ազդում է հասարակության ապագա անդամի, քաղաքացու անձի ձևավորման վրա:

Իր կազմավորման շրջանից սկսած ընտանիքը՝ որպես երեխաների դաստիարակության գործընթացի սուբյեկտ, հիմնականում կատարել է երեք գործառույթ.

- մարդկային ցեղի շարունակության,
- երեխաների դաստիարակության,
- տնտեսությունը համատեղ վարելու:

Անառարկելի է, որ երեխայի վարքի, հոգևոր-բարոյական արժեքների սոցիալականացման, շրջակա միջավայրի ճանաչման, նրա հետ փոխհարաբերությունների, ազգային ավանդույթների և սովորույթների իմացության հիմքերը դրվում են ընտանիքում: Ն.Ի. Դերեկլեևայի բնութագրմամբ. «Ընտանիքը կարելի է համեմատել մեկնարկային հրապարակի հետ, որը որոշում է մարդու կենսական երթուղին: Յուրաքանչյուր մեծահասակ և առաջին հերթին ծնողները, պատասխանատու են այն բանի համար, որ խնդիրները, որոնք երեխան կհանդիպի իր ճանապարհին, կարողանա հաղթահարել արժանապատվորեն ու ազնվորեն» [11, էջ 8]:

Ընտանիքի գործառույթներով պայմանավորված՝ փոխվել են նաև ընտանեկան դաստիարակության խնդիրները, որոնց թվին են դասվում՝

- երեխայի կրթության, դաստիարակության և զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը,
- երեխայի իմացական, ճանաչողական, ուսումնական գործունեության ուղղորդումն ու վերահսկումը,

- երեխայի մտավոր, բարոյական, հոգևոր, էկոլոգիական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսական, սեռական դաստիարակության կազմակերպումը,
- երեխայի սոցիալականացման գործընթացի իրականացումը,
- երեխայի, կենսական դիրքորոշումների և արժեքային կողմնորոշումների, քաղաքացիական որակների, քաղաքացիականության, հայացքների և համոզմունքների համակարգի զարգացումն ու ձևավորումը:

Հայ ականավոր մանկավարժ Հ. Հինդիլյանը դեռևս 19-րդ դարում գտնում էր, որ ընտանիքում պետք է երեխային սովորեցնել ապրելու արվեստը, քանի որ ընտանեկան կյանքը ինքնին մի դպրոց է: Միևնույն ժամանակ նա իրավացիորեն նշում էր, որ դպրոցն ու ընտանիքը երեխայի դաստիարակության վրա ազդող հիմնական գործոններն են: Ուստի դպրոցի և ընտանքի հիմնական նպատակը եղել և մնում է երեխայի սոցիալական զարգացման համար հարմարավետ միջավայրի և գործունեության պայմանների ստեղծումը[10, էջ 69]:

Արդի ժամանակաշրջանում մեր հանրապետությունում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացների հետևանքով որոշակի սրվել են ընտանեկան խնդիրները, որոնք, ինչ խոսք բացասականորեն են ազդում երեխաների դաստիարակության ու սոցիալականացման վրա և որոնց հաղթահարումը պահանջում է ընտանիքին դպրոցի շարունակական օժանդակությունն ու երեխայի սոցիալականացման գործընթացի մանկավարժական ուղղորդումը: Միայն դպրոցի և ընտանիքի ակտիվ և կորպորատիվ համագործակցությամբ հնարավոր կլինի հաղթահարել երեխաների դաստիարակության և սոցիալականացման գործընթացում ծագած դժվարությունները, զարգացնել ծնողների հոգեբանամանկավարժական գիտելիքները:

Մանկավարժական համագործակցության ընդհանուր բնութագրի էությունը հետևյալն է. ուսուցիչ-աշակերտ-ծնող համագործակցությունը որոշում է մանկավարժի ու երեխայի փոխհարաբերությունների բնույթը

ուսումնադաստիարակչական գործընթացում: Այդ համագործակցության ընթացքում է ձևավորվում շրջակա իրականության հետ սովորողների կապերն ու հարաբերությունները, որի ընթացքում, Ժ. Թադևոսյանի բնութագրմամբ.«Ձեռք բերված փորձը, գիտելիքներն ու հաղորդակցման ոճը, դերակատարումներն ու իրենց ըմբռնումները որոշ չափով փոխադրում են «Մեծ» հասարակության և սոցիալական այլ խմբեր» [8, էջ 22]: Այսինքն՝ հենց դրանով է պայմանավորված դպրոցականների արժեքային կողմնորոշումների, քաղաքացիական դիրքորոշումների ձևավորման, ինքնագնահատման, ինքնահիրացման հաջողությունը:

Դպրոց-ընտանիք համագործակցությանը բնորոշ են փոխադարձ աջակցությունը, փոխօգնությունը և փոխգործակցությունը:

Համագործակցության նպատակները, բովանդակությունը, ձևերը, միջոցները մեթոդները, տեխնոլոգիաները (անձնակողմնորոշված, համագործակցային, կոլեկտիվ, նախագծային, խաղային) որոշելիս ուսուցիչն առաջատար դեր ունի: Ուսուցչի իմիջը, հեղինակությունն ու վարքը երեխաների համար պետք է լինեն օրինակ, մոդել:

Ն.Ե. Շչուրկովայի կողմից առաջադրվել են դպրոցի և ընտանիքի համագործակցության հետևյալ սկզբունքները.

- համաձայնություն
- կապվածություն,
- ապրումակցում,
- համամրցակցություն,
- համագործակցություն [9, էջ 193]:

Համաձայնության սկզբունքը ենթադրում է երկու կողմերի պայմանավորվածությունը սովորողների դպրոցական կենսագործունեության կազմակերպման ուղղությամբ:

Կապվածության սկզբունքը ենթադրում է երեխայի կյանքի երկու տարբեր ոլորտների՝ դպրոցի և ընտանիքի փոխադարձ կապը: Նա միավորում է համագործակցությունը երեխայի ձեռքբերումներում:

Ապրումակցման սկզբունքը ենթադրում է գործընկերների համատեղ ապրումները, որոնք դրսևորվում են միմյանց նկատմամբ:

Համամրցակցության սկզբունքը ենթադրում է դպրոցում և ընտանիքում գտնվելու ընթացքում երեխայի կյանքի նկատմամբ փոխադարձ ուշադրություն և հետաքրքրություն:

Համագործակցության սկզբունքը ենթադրում է դպրոցի և ընտանիքի իրական գործունեությունը երեխայի կենսապայմանների բարելավման ուղղությամբ [9, էջ 194-205]:

Մեր կարծիքով այս սկզբունքներին կարելի է ավելացնել նաև հետևյալները.

- սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման նպատակների, խնդիրների և գործողությունների միասնականացում,
- դպրոցի դաստիարակչական աշխատանքների մեջ ծնողների ներգրավում,
- սովորողների ընտանիքների հետ տարվող աշխատանքներում դպրոցի կառավարման սուբյեկտների՝ տնօրինության, տարրական դասարանների ուսուցիչների, սոցիալական մանկավարժների գործողությունների համաձայնեցում,
- դպրոց-ընտանիք համագործակցության կազմակերպման գործընթացում մանկավարժության ժամանակակից գիտատեսական մոտեցումների և գործնական մանկավարժության ձեռքբերումների ստեղծագործաբար կիրառում,
- մանկավարժական համատեղելիության հաշվի առնում,
- դպրոց-ընտանիք համագործակցությունում ներգրավված բոլոր մասնակիցների՝ ուսուցիչների, ծնողների, երեխաների կարծիքների և դիրքորոշումների, իրավունքների և պարտականությունների հաշվառումը:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ համագործակցային ուսուցման գործընթացում ընտրվելիք ուսուցման սկզբունքները, մեթոդներն ու ձևերը տարբեր են և առավել կախված սովորողի առանձնահատկություններից, ինչպես նաև այն միջավայրային գործոններից, որոնցից է ընտանիքը:

ԳԼՈՒԽ 2: ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ռուս մանկավարժ Ն.Ի. Դերեկլեևան առաջարկում է ծնողների հետ տարվող կոլեկտիվ աշխատանքի հետևյալ ձևերը՝ ընդհանուր դպրոցական և ընդհանուր դասարանական ժողովներ, մանկավարժական համաժողովներ, ծնողական դասախոսություններ, գործնական խաղեր և բաց դռների օրեր, իսկ որպես ծնողների հետ տարվող անհատական ձևեր՝ այցելություն ընտանիք, անհատական խորհրդատվություն և աշխատանք ծնողների ակտիվի հետ[11]:

Կարծում ենք, որ այս մեթոդաբանական մոտեցումը այլևս համահունչ չէ հասարակության տեղեկատվական-տեխնոլոգիական զարգացման արդի մակարդակին և ժամանակակից մանկավարժական մոտեցումների պահանջներին:

Ուստի հաշվի առնելով դպրոց-ընտանիք համագործակցության վերաբերյալ ժամանակակից սովորողների ուսուցման և դաստիարակության նկատմամբ մարդասիրական, անձնակողմնորոշված, անհատականացված, տարբերակված, մանկավարժ-աշակերտ համատեղելիության ժամանակակից մոտեցումները՝ և ելնելով տարիների մանկավարժական աշխատանքի մեր փորձից՝ մենք առանձնացրել և առաջարկում ենք ուսուցիչների, երեխաների ու ծնողների համագործակցության հետևյալ արդյունավետ ձևերը.

- ծնողական ակտիվի ստեղծումը,
- դպրոցներում ծնողների համար հոգեմանկավարժական պատրաստության կենտրոնների ստեղծումը, որոնցում կլուծվեն ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացման, մանկավարժական մշակույթի, առաջացած մանկավարժական խնդիրների լուծման, խնդրահարույց իրավիճակներում կողմնորոշվելու, համագործակցային կարողություններ ձևավորման խնդիրները,
- համադպրոցական, դասարանական ծնողական ժողովները,

- պարբերաբար (երկու շաբաթ մեկ հաճախականությամբ) հատուկ ձևաթղթով ծնողներին աշակերտների ամփոփիչ և ընթացիկ առաջադիմության արդյունքների փոխանցումը,
- մանկավարժական տեղեկատվությունը, որը ներառում է հոգեբանամանկավարժական թեմաներով դասախոսությունները՝ դպրոցի հետ ծնողների ակտիվ փոխգործակցության, ընտանիքում և դպրոցում երեխաների իրավունքների պահպանման, նրանց նկատմամբ ուսուցիչների և ծնողների իրավունքների և պարտականությունների կատարման, նրանց մտավոր գործունեության արդյունավետ կազմակերպման, ռիսկի գործոնների նվազեցման, առողջության պահպանման, ուսուցիչների և սովորողների համատեղելիության, արտադպրոցական գործունեության կազմակերպման, խնդիրների վերաբերյալ,
- ծնողների հետ հոգեբանամանկավարժական հատուկ ծրագրավորված աշխատանքների իրականացումը՝ ծնողական ժողովների, մանկավարժական սեմինարների, հոգեբանական թրեյնինգների, մանկավարժական խնդիրների լուծմանն ուղղված վարժությունների, ռեֆլեքսիայի, դերային խաղերի, մանկավարժական ինքնակրթության միջոցով,
- ծնողների հետ սոցիալական կորպորատիվ նախագծերի կազմումը և իրականացումը,
- ծնողների ծանոթացումը դպրոց-ընտանիք համագործակցության վերաբերյալ մեթոդական գրականությանը,
- ազգային, ընտանեկան և համադպրոցական տոների, բնապահպանական սոցիալական, բարեգործական համատեղ միջոցառումների կազմակերպումը դպրոց-ընտանիք համագործակցության շրջանակներում,
- դպրոցին ծնողների բարեգործական օգնության, համադպրոցական ծնողական համաժողովների, մանկավարժական երեկոների կազմակերպումը,

Իհարկե՛, չի կարելի ասել, որ նշված ձևերը վերջնական են, դրանք անընդատ փոփոխվում և կատարելագործվում են՝ պայմանավորված ծնողական համայնքի առանձնահատկություններով, հասարակության զարգացման մակարդակով և առաջընթացով:

Իհարկե, ժամանակակից հանրակրթական հաստատություններում դպրոց-ընտանիք համագործակցության հիմնական ձևը դասարանական ծնողական ժողովներն են, որոնք միաժամանակ պետք է ծնողների համար դառնան հոգեբանամակավարժական գրագիտության ձեռք բերման դասեր, որոնք պետք է իրականացնել որոշակի թեմատիկայով և ալգորիթմով.

1. Նախապատրաստական մաս-որոշակիացվեն այն հարցերը, որոնք բխում են ուսումնական տարվա սկզբում պլանավորված թեմաներից՝ դասվարի կամ դասղեկի հանդիպում ծնողների հետ, յուրաքանչյուր աշակերտի համար առաջադիմության թերթիկների պատրաստում:
2. Ծնողական ժողովի թեմայի որոշում և սցենարի նախապատրաստում: Ծնողական ժողովների քննարկվելիք հարցերի որոշակիացում:
3. Ծնողների ներկայության ապահովում ծնողական ժողովներին, դասարանի նախապատրաստում ծնողական ժողովի անցկացմանը:
4. Ծնողական ժողովի արդյունքների ամփոփում և հաջորդ ծնողական ժողովի թեմայի քննարկում ծնողների և դասավանդող ուսուցիչների հետ:

Դասարանական ծնողական ժողովները պետք է կրեն և՛ ճանաչողական, և՛ կրթական, և՛ գործնական բնույթ: Այսինքն՝ դրանք միևնույն ժամանակ պետք է լինեն ծնողներին մանկավարժական գիտելիքների հաղորդման և գործնականում դրանց յուրացման միջոցառումներ: Ըստ այդմ էլ, ըստ դասարանների, պետք է որոշվեն ծնողական ժողովների թեմատիկան, բովանդակությունը, անցկացման պարբերականությունը, օրինակները, սցենարները, տարբերակները և դրանց իրականացմանն ուղղված գործողությունները:

Ելնելով վերոբերյալից՝ մենք մշակել ենք տարրական դասարաններում ծնողական ժողովների թեմատիկ խմբեր, որոնք ներառում են՝

● թեմաներ, որոնք վերաբերում են ընտանիքի գործառույթներին, ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին, ծնողների մանկավարժական գրագիտության հարստացման, դպրոց-ընտանիք փոխգործակցության, սովորողների և ծնող-ուսուցիչ-աշակերտ համակարգում մանկավարժական հաղորդակցման, տակտի և հարաբերությունների էթիկայի, ծնողների մանկավարժական մշակույթի ձևավորման խնդիրներին,

● թեմաներ, որոնք վերաբերում են կրտսեր դպրոցականների, ուսումնական գործունեության կազմակերպմանը, դասապատրաստման և ազատ ժամանակի կազմակերպմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես համացանցի նրանց կյանքում ունեցած դերի ու նշանակության բացատրմանը, ինչպես նաև դրանց բացասական ազդեցության կանխարգելման մանկավարժական պայմաններին,

● թեմաներ, որոնք վերաբերում են ուսուցման գործընթացում սովորողների իմացական, ստեղծագործական, հետազոտական, նախագծային, ընթերցանական կարողությունների, խոսքի մշակույթի զարգացման, դասապատրաստման դժվարությունների հաղթահարման խնդիրներին,

● թեմաներ, որոնք վերաբերում են սովորողների ֆիզիոլոգիական, հոգեբանական զարգացման, առողջարարահիգիենիկ պայմանների ապահովման, սոցիալականացման, առողջ ապրելակերպի հարցերին:

Սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների համատեքստում դպրոց-ընտանիք համագործակցության, ծնող-երեխա փոխգործակցության արդյունքների որակի ցուցիչներ կարելի է համարել սովորողների կրթվածության որակը, դասվարների, դասվարական մեթոդական մասնախմբերի և դպրոցի կառավարման այլ սուբյեկտների մանկավարժական մասնագիտական

կոմպետենտությունը, ծնողների հոգեբանամանկավարժական գիտելիքների բարձր մակարդակը:

Ուսուցիչները և ծնողները քաջատեղյակ պիտի լինեն, որ մանկավարժական փոխգործակցության արդյունքում և՛ ծնողների, և՛ երեխաների հոգեկանում առաջ են գալիս նորագոյացություններ: Այսպես, օրինակ՝ Մ.Ա. Ասատրյանը նշում է որ. «Դպրոցամուտը, որը բնութագրվում է իբրև ճգնաժամային հոգեբանական ու կազմաբնախոսական զարգացման նշանակալի շրջան երեխայի կյանքում, նաև մեծագույն իրադարձություն է, ոչ միայն երեխաների, այլև ծնողների համար» [2, էջ 54]:

Նորագոյացություններ են նաև դպրոցական ռեժիմին, ընկերների խմբին, ուսուցիչների պահանջներին հարմարվելը: Ընդհանրապես առաջին դասարանցիները դպրոցին հարմարվելու գործընթացում կրում են ֆիզիոլոգիական և հոգեբանական դժվարություններ: Այդ իսկ առումով ուսուցիչները ոչ միայն իրենք պետք է իմանան դպրոցականների մտածական գործունեության առանձնահատկությունները, ճանաչեն երեխայի հուզաշխարհը և նրա նշանկությունը երեխայի զարգաման մեջ, այլև ծնողներին հաղորդեն գիտելիքներ այդ գործընթացների մասին: Այս առումով մեծ աշխատանք պետք է տանի դասվարը, որի աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի մանկավարժական դիագնոստիկան: Ն.Ի. Դերեկլեևան նշում է. «Առանց հոգեբանամանակավարժական դիագնոստիկայի հնարավոր չէ կառուցողական ձևով պլանավորել դաստիարակչական աշխատանքը դասարանական կոլեկտիվում և կարգավորել ծնողների հետ տարվող աշխատանքը» [12, էջ 52]:

Մեր հետազոտության ընթացքում առանձնացվել են մի շարք մանկավարժական պայմաններ, որոնք նպաստում են ուսուցիչների և ծնողների համագործակցության, երեխաների և ծնողների փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը:

Այդ պայմաններից ենք համարում.

- ուսուցչի մարդասիրական կողմնորոշումը,

- ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա համակարգում փոխվստահության մթնոլորտի ապահովումը, համատեղ գործունեության մեջ փոխըմբռնումը,
- համաստեղծագործական-կրթական միջավայրի ստեղծումը,
- ուսուցիչների կոմպետենտությունը,
- փոխօգնության և փոխադարձ բարյացկամության մթնոլորտի ապահովումը,
- քաղաքացիական, մարդասիրական դաստիարակության գաղափարների քարոզումը,
- կողմերի դաստիարակչական ներուժի օբյեկտիվ գնահատումը,
- ժողովրդավարական սկզբունքների զարգացումը փոխհարաբերություններում, առաջացող հիմնախնդիրների արդյունավետ, կառուցողական քննարկումը,
- ընդհանուր համաձայնության ձգտումը դաստիարակչական գործընթացի բոլոր փուլերում,
- կողմերի ներգրավվածությունը ստեղծագործական, դաստիարակչական գործընթացում:

Այսպիսով, մեր հետազոտության արդյունքում մենք բացահայտեցինք և որոշակիացրինք դպրոցի և ընտանիքի համագործակցության առանձնահատկություններն ու սկզբունքները և նրա արդյունավետության վրա ազդող կարևոր գործոնները, մանկավարժական պայմանները, միջոցներն ու ձևերը, որոնց բնութագրումը կտրվի հաջորդ ենթագլխում:

Հանրակրթական դպրոցում կրթության բովանդակության բարդացման, սովորողների ոսումնական ծանրաբեռնվածության օր-օրի ավելացման արդի պայմաններում, ոչ միայն դպրոցը, այլև երեխաներն են զգում ծնողների մանկավարժական գրագիտության անհրաժեշտությունը: Շատ ծնողներ՝ հատկապես մայրերը ստիպված երեխաների հետ սովորում և սովորեցնում են իրենց երեխաներին, իսկ դրա համար անհրաժեշտ են ոչ միայն առարկայական գիտելիքներ, այլև ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների իմացություն:

Արդի ժամանակշրջանում հասունացել են արդեն ընտանիքի դերի և ընտանեկան դաստիարակության որակի ապհովման, երեխաների սոցիալականացման անհրաժեշտ պայմանների ստեղծման, դպրոցի և ընտանիքի համագործակցության, մանկավարժական աջակցության նոր ձևերի, միջոցների, տեխնոլոգիաների խնդիրների լուծումը:

Ըստ մեզ՝ ծնողներին մանկավարժական աջակցության բովանդակությունը պետք է լինի հետևյալը՝

- տեսական պարապմունքներ՝ ծանոթացում ուսուցման սկզբունքներին, մեթոդներին, ձևերին,
- գործնական պարապմունքներ՝ մանկավարժական խնդիրների լուծում, հաղորդակցման ձևեր, էքսկուրսիաների պլանավորման և նախապատրաստման աշխատանքներ:

Մեր կարծիքով ժամանակակից ընտանիքին մանկավարժական աջակցությունն ունի իր առանձնահատկությունները, որոնցից են՝

1. ծնողների տիպաբանության հաշվառումը,
2. ծնողների մանկավարժական օգնություն ստանալու և մանկավարժական գիտելիքների ձեռք բերելու պահանջմունքը,
3. ընտանիքում ծնողների երեխաների հետ փոխգործակցության մեջ ծագած հակասությունների բնույթը,
4. ընտանեկան դաստիարակության ոճերը:

Վերը նշված առանձնահատկությունների հիման վրա դասվարական մեթոդական մասնախմբերի կողմից պետք է մշակվի մանկավարժական աջակցության ծրագիր՝ ներառելով այն դպրոցի ծնողների հետ տարվող ընդհանուր աշխատանքային պլանում:

Ծնողների հետ կրթական տարբեր ծրագրերի իրականացումը ենթադրում է տարբեր տեխնոլոգիաների կիրառում՝ խաղային, համագործակցային, կոլեկտիվ, նախագծային:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տարրական դպրոցի և ընտանիքի համագործակցությունը մանկավարժական գործընթացում ենթադրում է հակադարձ կապի ապահովում և տեղեկատվության փոխանակում: Այս գործընթացի արդյունավետությունը

պայմանավորված է մանկավարժի կոմպետենտության և հաղորդակցման մշակույթի բարձր մակարդակով:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում դպրոցի և ընտանիքի համագործակցության հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականությունում առկա տեսությունների, հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը և մեր հետազոտության արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ եզրակացությունները.

1. Տեղեկատվական-հաղորդակցական, թվային տեխնոլոգիաների զարգացման արդի մակարդակը, համացանցով երեխաների աննախադեպ տարվածությունը պահանջում է սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում դպրոցի և ընտանիքի համագործակցության նոր ձևերի, միջոցների, տեխնոլոգիաների մշակում և ներդնում: Արդիական են դառնում դրանց կիրառման գործընթացի բովանդակության ռազմավարական նախագծումը և այդ գործընթացի արդյունքների մշտադիտարկումն ու հայտորոշումը:

2. Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը, միջոցներն ու տեխնոլոգիաները պետք է դիտարկել որպես սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ իրականացման կարևորագույն գործոններ:

3. Հետազոտության առաջադիր խնդիրների իրականացման համար բացահայտվել և բնութագրվել են դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման վերաբերյալ ժամանակակից մանկավարժական մոտեցումները, ուսուցիչների, սովորողների ու նրանց ծնողների համագործակցության իրականացման հնարավորությունները, նպատակները, խնդիրները, բովանդակության ձևերն ու միջոցները, դրանց վրա ազդող գործոնները ՀՀ հանրակրթական դպրոցներում :

4. Հիմնավորվել է, որ դպրոցի և ընտանիքի համագործակցությունն իրականացվում է անհրաժեշտ մանկավարժական պայմանների ապահովման և որոշակի սկզբունքների ու առանձնահատկությունների հաշվառման, մանկավարժական խորհրդատվության կազմակերպման հիման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Լ.Թ., Սարգսյան Փ. Ա., <Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը>, Երևան,<Զանգակ-97>, 2002թ., 96 էջ,
2. Ասատրյան Մ. Ա. <Դպրոցամուտը երեխայի սոցիալական նոր միջավայրին հարմարվելու կենսափուլ>: Մանկավարժություն գիտամեթոդական, վերլուծական ամսագիր, 2011թ., թիվ 7,
3. Գասպարյան Յու., <Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում/ սոցիոլոգիական հիմնահարցեր/>, Երևան, 2003թ., 172 էջ,
4. Թորգոմյան Լ. Վ., <Ընտանեկան դաստիարակության մի քանի սկզբունքներ և մոտեցումներ>, ՀՊՄՀ, Երևան, 2008 թ.,
5. Հայաստանի Հանրապետության օրենքը, պաշտոնական տեղեկագիր 12/78, 1999թ.,

6. Հինդիլյան Հ., <Անկեղծ էջեր, Գ հատոր>, Կ. Պոլիս, 1921թ.,

7. Սեդրակյան Ս. Ա., <Ընտանիքի հոգեբանություն>, Երևան, 2010 թ., 453 էջ,

8. Սուխոմլիսկի Վ. Ա., <Սիրտս նվիրում եմ երեխաներին>, Երևան , Լույս հրատ.,

9. Дереклеева Н. И., “Новые родительские собрания. 1-4 классы”, Вако, 2006 г., 334 стр.,

10. Дереклеева Н. И., “Справочник классного руководителя. 1-4 классы”, Вако, 2014 г., 237 стр.,

11. Дереклеева Н. И., “Справочник классного руководителя. 5-11 классы”, Вако, 2003 г., 271 стр.: